Հավելված
ԵՊՀ ռեկտորի 01.04.25թ. թիվ 60/45-Ա հրամանի

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՍՊԻՐԱՆՏԻ, ՀԱՅՑՈՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ՀԵՌԱՑՄԱՆ, ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ասպիրանտի, հայցորդի (այսուհետ՝ սովորող) ուսումնառության ընդհատման (հեռացման, ազատման) և վերականգնման հետ կապված հարաբերությունները:

II. ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

2. ԵՊՀ-ից սովորողը հեռացվում է.

1) տարեկան ատեստավորման ժամանակ չատեստավորվելու դեպքում,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով կամ ԵՊՀ-ի և սովորողի միջև կնքված ուսումնառության պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում,

3) ԵՊՀ-ի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում,

4) սույն կարգի 12-րդ կետով սահմանված ժամկետի չպահպանման, կամ բաց թողնված ժամկետը հարգելի չճանաչվելու դեպքերում:

3. ԵՊՀ-ից սովորողը ազատվում է.

1) իր դիմումի համաձայն,

2) այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում:

4. ԵՊՀ-ից սովորողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման համաձայն սույն կարգի 2-րդ կետով սահմանված հիմքերի:

5. ԵՊՀ սովորողի ուսումնառությունը դադարեցվում է.

1) ժամկետային պարտադիր կամ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների՝ ծառայության ընթացքում պայմանագրային զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչվելու դեպքում,

2) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում,

3) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու դեպքում:

6. Սույն կարգի 2-3-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում սահմանված հրամանները տրվում են համապատասխան հիմքերի և փաստաթղթերի ներկայացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հրամանի օրինակը ուղարկվում է սովորողի համալսարանական էլ.փոստին:

III.ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

7. ԵՊՀ-ից հեռացված կամ ազատված սովորողի ուսումնառության վերականգնումը կատարվում է ընդհատման պահից առնվազն 6 ամիս հետո՝ անկախ ուսուցման ձևից:

Սովորողի ուսումնառությունը վերականգնվում է վճարովի ուսուցման համակարգում՝ ուսումնառության մնացորդային ժամանակահատվածով, բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով հեռացման, որի դեպքում սովորողի ուսումնառությունը վերականգնվում է այն կիսամյակի սկզբից, որից ընդհատվել է:

Սովորողի ուսումնառությունը վերականգնելու դեպքում ուսման վարձավճարը հաշվարկվում է ընթացիկ տարվա համար սահմանված վարձավճարի չափով:

8. Ուսումնառությունը վերականգնելուց հետո սովորողը մինչև ընթացիկ տարվա մնացորդային ժամկետի ավարտը պետք է անցի տարեկան ատեստավորում:

9. Սովորողի ուսումնառությունը վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է ԵՊՀ ռեկտորին՝ յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-15-ը կամ հունվարի 15-30-ն ընկած ժամանակահատվածում՝ աշխատանքային օրերին:

10. Սույն կարգի 2-3-րդ կետերով սահմանված հիմքերով ԵՊՀ-ից հեռացված (ազատված) սովորողի ուսումնառության վերականգնումը հնարավոր է համապատասխան ամբիոնի դրական եզրակացության (գիտական ղեկավարի մասին նշումով) դեպքում:

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված եզրակացությունը ստանալուց հետո դիմումատուն պարտավոր է եռօրյա ժամկետում կատարել անհրաժեշտ վճարումները (ուսման վարձավճարը, պարտքերի մարման վճարը և այլն) և ներկայացնել վճարման անդորրագիրը:

12. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված դեպքերում ուսումնառությունը դադարեցրած սովորողի ուսումնառությունը վերականգնվում է՝

1) եթե ուսումնառության դադարեցման հիմքերը վերանալու պահից 10-օրյա ժամկետում սովորողը դիմում է ներկայացրել ԵՊՀ ռեկտորին,

2) մինչև ուսումնառության դադարեցումն ունեցած կարգավիճակի պահպանմամբ,

3) ասպիրանտուրայում կամ հայցորդության համակարգում ուսումնառության մնացորդային ժամանակահատվածով:

Սույն կետով սահմանված ժամկետը խախտելու դեպքում սովորողը հեռացվում է ԵՊՀ-ից, եթե բաց թողնված ժամկետը չի համարվում հարգելի:

Ուսումնառությունը դադարեցրած սովորողի վերականգման պահին նախկին մասնագիտության բացակայության դեպքում ԵՊՀ առաջարկությամբ և իր համաձայնությամբ սովորողի ուսումնառությունը կարող է վերականգնվել հարակից մասնագիտությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ այլ մասնագիտությամբ:

13. Ուսումնառությունը վերականգնելու մասին հրամանը տրվում է պահանջվող փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: